21. 06. Արտգրված է

2022-2023 ուստարի

ՀՀ Լոռու մարզի Ստեփանավան քաղաքի N2 հիմնական դպրոցի 2-րդ <<ա>> դասարանի ղեկավարի հաշվետվություն

Դասվար՝ Ղ. Մովսեսյան

2-րդ <<ա>> դասարանում սովորում են 26 աշակերտներ՝ 17 տղա, 9 աղջիկ. 100 % առաջադիմություն ,որակը՝ 92 %: Ուստարվա ավարտին դասարանում եղել են 14 գերազանց, 9 առաջավոր աշակերտ: Կա մեկ ներառված աշակերտ:

Սիրում են մասնակցել տարատեսակ միջոցառումների, մրցույթների, վիկտորինաների:

Դասարանը դասվարի հետ անցկացրել է <<Բարու և չարի հավերժական պայքարը >> խորագրով միջոցառումը, որի ընթացքում երեխաները իրենց դրսևորել են շատ լավ:

Այցելել են Ստեփանավանի Սահակ Սահակյանի անվան թանգարան, դիտել տարբեր ցուցահանդեսներ, տիկնիկային թատրոններ, կրկես, որոնք կազմակերպվել են և՛ դպրոցում, և՛ քաղաքի մշակութային կենտրոններում: Ուսումնական էքսկուրսիա է կազմակերպվել Դսեղ:

2-րդ <<ա>> դասարանի աշակերտները մասնակցել են նաև դպրոցական, տարածաշրջանի սպորտային միջոցառումներին, ստացել են պատվոգրեր: Մասնակցել են դպրոցական, դասարանային շաբաթօրյակներին:Կազմակերպվել են տեսադասեր, բաց դաս մայրենիից, բաց դասղեկական դաս, Հ. Թումանյանին նվիրված դաս-միջոցառում:

Դասարանում տիրում է խաղաղ մթնոլորտ, չնայած երբեմն կան տարաձայնություններ, որոնք ստանում են արագ լուծում:Հաջորդ ուսումնական տարում ևս պետք է աշխատել ակտիվ և գրանցել հաջողություններ:

2022-2023 ուսումնական տարվա ընթացքում կատարվել են ուսումնադաստիարակչական հետևյալ աշխատանքները՝

Ուսումնառությունը հետաքրքիր և արդյունավետ դարձնելու համար ստեղծվել են բարենպաստ պայմաններ ,միջավայր, համապատասխան կահավորում:

- Խորացվել է փոխհամագործակցությունը և փոխօգնությունը:
- Աշակերտների մեջ ամրակայվել է սերը ուսման, հայրենիքի, դպրոցի նկատմամբ:
- Սովորեցրել ենք գնահատել սեփական արարքները,նկատել իրենց և ընկերների թերությունները, ժամանակին շտկել դրանք:
- Կարևորվել է անձնական հիգիենան և մաքրասիրությունը:
- Քաջալերվել են օրինակելի աշակերտները , խրախուսվել նրանց ձեռքբերումները և շտկվել բացթողումները: Ունեցել ենք խաղալիք ընկեր, ակտիվորեն լրացրել ենք նրա օրագիրը:
- Կազմակերպվել են գործնական աշխատանքներ որոնք նպաստել են գիտելիքների արժևորմանը, կյանքում կիրառմանը:
- Դասարանում ապահովել ենք խաղաղ, դրական միջավայր:
- Կազմակերպվել են միջոցառումներ , էքսկուրսիաներ, արշավներ, զբոսանքներ:
- Կատարել դասալսումներ , ծնողական ժողովներ, ուստարվա ընթացքում ամուր ենք պահել աշակերտ-ծնող-դպրոց կապը:
- Կատարվել են թեմատիկ դասղեկական ժամեր, լրացվել է կանոնավոր կերպով Դասղեկի մատյանը: